# ՏԵՂԵԿԱՆՔ

ԱԺԲԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018-2022 ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍ ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտներ)













* Ներառված են նաև եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները,

** Այլ հարկային եկամուտներում ներառված են` ճանապարհային հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը, միասնական մաքսային վճարը, դրոշմանիշային վճարները և այլ եկամուտներ (այդ թվում նաև` ՀՀ ՊԵԿ արտաբյուջետային ֆոնդին մուտքագրված գումարները)

2022 թ. հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 927.9 մլրդ դրամ, որը 2022թ. առաջին կիսամյակի հաստատված ցուցանիշը գերազանցում է 5.5 %-ով:

2022 թ. հունվար-հունիս ամիսների փաստացի ցուցանիշը 2021 թ. համապատասխան ցուցանիշից ավել է 23.7 %-ով կամ 177.7 մլրդ դրամով, 2020թ.-ից ավել է 36.4 %-ով կամ 247.6 մլրդ դրամով, 2019թ. ցուցանիշին գերազանցում է 30.1%-ով կամ 214.5 մլրդ դրամով և 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 62 %-ով կամ 355 մլրդ դրամով:

2022 թ. հունվար-հունիս ամիսներին`

- ավելացված արժեքի հարկի գծով մուտքերը կազմել են 287.8 մլրդ դրամ, որը 2021 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 18.8 %-ով, 2020 թ. -ից ավել է 34.9 %-ով, 2019 թ.-ից ավել է 25 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 48.7 %-ով,
- ակցիզային հարկի գծով մուտքերը կազմել են 49.3 մլրդ դրամ, որը 2021 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 12.7 %-ով, 2018 թ.-ից ավել է 1 %-ով, իսկ 2019 թ.-ից և 2020 թ.-ից պակաս է համապատասխանաբար` 1.2 %-ով և 6.3 %-ով,
- եկամտային հարկի գծով մուտքերը կազմել են 227.5 մլրդ դրամ, որը 2021 թ. համապատասխան ցուցանիշից ավել է 8 %-ով, 2020 թ. -ից ավել է 9.9 %-ով, 2019 թ.-ից և 2018 թ. -ից ավել է համապատասխանաբար` 12.5 %-ով և 35.2 %-ով,
- շահութահարկի գծով մուտքերը կազմել են 162.6 մլրդ դրամ, որը 2021թ. համապատասխան ցուցանիշից ավել է 49.4 %-ով, 2020 թ.-ից ավել է 67.1 %-ով, 2019 թ.-ից ավել է շուրջ 43.2 %-ով և 2018 թ. -ից ավել է 66.2%-ով,
- մաքսատուրքերի գծով մուտքերը կազմել են 15.5 մլրդ դրամ, որը 2021 թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 63.6 %-ով, 2020 թ. -ից պակաս է 48.1 %-ով, 2019 թ.-ից պակաս է 62 %-ով և 2018 թ. ցուցանիշից պակաս է 60.3 %-ով,
- բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով մուտքերը կազմել են 52.9 մլրդ դրամ, որը 2021 թ. համապատասխան ցուցանիշից ավել է 55.7 %-ով, 2020 թ. մակարդակը գերազանցում է 82.1 %-ով, 2019 թ. -ից և 2018 թ. -ից ավել է համապատասխանաբար` 115.4%-ով և 66.2 %-ով,
- շրջանառության հարկի գծով մուտքերը կազմել են 18.3 մլրդ դրամ, որը 2021 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 27.4 %-ով, 2020 թ. -ից ավել է 24.7 %-ով, 2019 թ.-ից ավել է 38 %-ով, 2018 թ.-ից ավել է 97.3 %-ով,
- սոցիալական վճարների գծով մուտքերը կազմել են 29.8 մլրդ դրամ, որը 2021 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 44.2 %-ով, 2020 թ. -ից ավել է 174.7 %-ով, 2019 թ.-ից ավել է 216.9 %-ով և 2018 թ.-ից շատ է 223 %-ով,
- այլ հարկային եկամուտներից մուտքերը կազմել են շուրջ 24.2 մլրդ դրամ, որը 2021 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 17.7 %-ով, 2020 թ. -ից ավել է 124.1 %-ով, 2019 թ.-ից ավել է 129.3 %-ով և 2018 թ.-ից շատ է 140.7 %-ով,
- պետական տուրքերի գծով մուտքերը կազմել են 60.1 մլրդ դրամ, որը 2021 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 257.3 %-ով, 2020 թ. -ից ավել է 301.6 %-ով, 2019 թ.-ից ավել է 250.4 %-ով և 2018 թ.-ից շատ է 279.3 %-ով:

Տեղեկատվության աղբյուրը` «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2021թ. դեկտեմբերի 23-ի թիվ 2121-Ն որոշում և ՀՀ ՊԵԿ կայքում հրապարակված տեղեկատվություն 2018-2022թթ. ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ